ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 օգոստոսի 2026 թվականի N 1252-Ա

ԳՈՒՅՔ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ, ՆՎԻՐԵԼՈՒ ԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ և 9-րդ հոդվածի 5-րդ մասերը, «Պետական գույքի կառավարման մասին» օրենքի 25-րդ հոդվածի 4-րդ մասը և 30-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. 2026 թվականի մայիսին Հայաստանի Հանրապետությունում կայացած Եվրոպական քաղաքական համայնքի 8-րդ գագաթնաժողովի կազմակերպման ծառայությունների մատուցման պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման շրջանակում ծառայությունները մատուցող ընկերության կողմից տրամադրված գույքն ամրացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին (այսուհետ՝ կոմիտե)՝ համաձայն սույն որոշման NN 1 և 2 հավելվածների (այսուհետ՝ գույք 1 և գույք 2):

2. Գույք 2-ը նվիրել «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն):

3. Գույք 1-ից սույն որոշման N 3 հավելվածում ներառված գույքը (այսուհետ՝ գույք 3) մինչև 2026 թվականի դեկտեմբերի 1-ը անհատույց օգտագործման իրավունքով հանձնել «Դոպինգ Սփեյս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

4. Կոմիտեի նախագահին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում գույք 1-ը և գույք 2-ը միակողմանի ընդունել կոմիտեի հաշվեկշիռ.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված աշխատանքների ավարտից հետո մեկամսյա ժամկետում ընկերության հետ կնքել գույք 2-ի նվիրատվության պայմանագիր.

3) սույն կետի 1-ին ենթակետում նշված աշխատանքների ավարտից հետո մեկշաբաթյա ժամկետում «Դոպինգ Սփեյս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ ապահովել գույք 3-ի անհատույց օգտագործման պայմանագրի կնքման և հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

20.08.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ